

## ԳՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Bibliotheca Armeno-Georgica. IV. Діонисій Өра-  
кійскій и Армянскіе толкователи. издалъ и изслѣдо-  
валъ Н. Адонцъ. Петроградъ. 1915.

Հայ քերականների 1) դպրոցը, որ սկիզբն է առնում յետա-  
սական շրջանում, այն է Չ. դարից սկսած, բնորոշում է այն  
նորմուծումներով, որ առաջ բերեց ինչպէս հայ մտածութեան  
այնպէս և հայ լեզուի մէջ հետևողութեամբ յունականին: Ով ուշի  
ուշով հետևել է հայերէնի առանձնատկութեանց մէկ շրջանից  
միւսը, նրա համար պարզ է, որ դասական մատենագիրներին  
անձանօթ էին լեզուական այնպիսի ձևեր ու կերտուածներ, որոնք  
այնքան յաճախողէս են յաջորդ դարերում և, ի մասնաւորի, փի-  
լիսոփայական գրուածներէ մէջ: Ինչքան էլ դասական լեզուն պարզ  
էր, գեղեցիկ և աւելի հարազատ յարտայայտութիւն հայ մտքի, այնու  
ամենայնիւ յաջորդ դարերում, մինչև գրաբարի տիրապետութեան  
վախճանը, հակառակ հայ հեղինակներէ մեծամեծ Զանքերին հա-  
ւատարմաբար վերարտադրելու ոսկեգարի լեզուն, վերջինս ան-  
խուսափելիօրէն ենթարկուեց փիլիսոփայական դպրոցի ազդեցու-  
թեանը և այդ ազդեցութեան հետքերը, երկարատև գործածու-  
թիւնից անձանաչելի դարձած, յարատևում են նոյնիսկ արդի  
գրական հայերէնում. օր. ԵՆ—նախամասնիկով կերտուած բոլոր  
բառերը. ինչպէս՝ ԵՆ—կայ (յն. εν-εστω), գսկ. յանդիման:

Այդ յարատևութիւնն առանց պատճառի չէ: Փիլիսոփայական  
դպրոցի հիմնագիրները նոյնքան հայ էին, որքան և մեր միւս հեղի-  
նակները. նրանք նոյնպէս ծանօթ էին հայ լեզուի ամբողջ բա-  
ռագանձին ու քերականութեանը. հետևապէս և նրանց մուծած  
նորութիւններից շատ շատերը ներկայացնում էին յաջող կեր-  
տուածներ և կարող էին բնաւ խորթ չհնչել: Սովորական դարձած  
այն խօսքը, թէ Դաւիթ անյաղթի կամ սրա նմանների լեզուն  
ըմբռնելու համար անհրաժեշտ է յունարէն լիմանալ, չպէտք է

4) Պարտք եմ համարում ընդգծել այստեղ, որ ֆեռական բառը  
մենք գործ ենք անում իր սկզբնական խմատով (յն. Γεραματικος, քե-  
րականութիւն գրող). արդի խմատով ըմբռնուած «ֆեռական»ը վազուց  
սկսած է գործածութիւնից ընկներ:

ենթադրել տայ, թէ միայն յունարէնի ծանօթութիւնը բաւական է այդ նպատակի համար: Որքան յունարէնի այնքան և բուն իսկ հայ լեզուի խոր հմտութիւն է հարկաւոր ոչ միայն տողերի իմաստն ըմբռնելու այլ և իւրաքանչիւր կերտուած ճշտիւ վերլուծելու համար: Օրինակ՝ եզ բառը, որ նշանակում է մի, յունարէնով բացադրուել չի կարող և անշուշտ զուտ հայերէն է <sup>1)</sup>, թէև այլուր չենք պատահում. և—մասնիկը ի նախդրի մի մասն է, որ պահուած է հնգերոպական ուրիշ լեզուներում (հմ. լատ. in, յն. εν) և այժմ էլ դեռ գործածական է հայ բարբառներից՝ Ազուլիսում. այսպիսով ինքնին հասկանալի կը դասնայ ևեզե բառը, էջ՝ 9, = 33 ενός.—Այս կարգի օրինակներ կարող ենք շատ շատ թուել, համոզուելու համար, որ փիլիսոփայական լեզուի առանձնայատկութեանց հիմքը նոյնինքն հայերէնն է բառիս ամենալայն իմաստով:

— Նոյնիսկ արդի հայերէնի պատմութեան համար անհրաժեշտ է սոյն դպրոցի կերտած ու գործածած լեզուի մանրախոյզ ուսումնասիրութիւնը: Այս տեսակէտից ահա տողերիս ստորագրողը անհուն հրճուանքով ուղջունում է պ. Ադոնցի ներկայ աշխատութիւնը, որից ոչ նուազ օգտուելու են նաև հայադիտութեան այլ ճիւղեր, ինչպէս և բոլոր նրանք, որոնք զբաղում են յոյն քերականների ուսումնասիրութեամբ, քանի որ շատ տեղ յոյն բնագրերը պակասաւոր են և հայերէն թարգմանութիւնը մեծ լոյս կարող է սփռել նրանց վրայ:

Պ. Ադոնցի հրատարակութիւնը ամփոփում է հետևեալ էական մասերը. 1) մի ընդարձակ ներածութիւն, որտեղ մանրամասն նկարագրում, դասաւորում և ճշտում է իր օգտագործած ձեռագրերը, էջ՝ 1—CXCH. 2) «Արուեստ Դիոնիսեայ քերականի» զուգընթացաբար յոյն բնագրի հետ և օժտուած լիակատար բառացանկերով. էջ՝ 1—76. 3) «Մեկնութիւն Դաւթի փիլիսոփայի», էջ՝ 77—124). 4) «Անանուն Մեկնիչ քերականին», էջ՝ 125—156. 5) «Մովսէսի քերթողի մեկնութիւն քերականին» էջ՝ 157—180. 6) «Ստեփաննոսի Սիւնեցոյ մեկնութիւն քերականին», էջ՝ 182—219. 7) «Գրիգորի մաղիստրոսի և Կիտաւնտի որդոյ Վասակայ Մարտիրոսի մեկնութիւն քերականին», էջ՝ 221—249. 8) «Համայն Արևելցոյ մեկնութիւն քերականին», էջ՝ 251—285. 9) «Յանկ անուանց և բառից» էջ՝ 287—305.

1) Հաւանօրէն ևեզ բառն է ժողովրդական արտասանութեամբ եւ պարզ-ի իմաստով, որից եւ երկրորդաբար, յունարէնի համեմատութեամբ սեւերի դանազանութեան համար, գործածուած մի նշանակութեամբ: Ե-ի անկու՛մը բառակարգին շատ հին երեսոյթ է հայերէնում:

Այս բոլորը գիտութեան տալու համար պ. Ադոնցը օգտուել է մէկ կողմից Մայր Աթոսի, միւս կողմից՝ Վիեննայի ու Վենետիկի Մխիթարեանց ձեռագրերից՝ որոնց բոլորի թիւը հասնում է 30-ի: Սրանցից ամենահինը գրի է առնուած Փրկչական 1307 թուին, իսկ նրանք, որոնք ամենակարեօրներն են, մեծ մասամբ 15 և 16-րդ դարերի ձեռագրեր են: Հասկանալի է ուրեմն այն անխոնջ ու հետեցական աշխատանքը, որ դորժ է դրել գիտնական հեղինակն ընտրելու, ճշդելու և վերականգնելու դարեր առաջ ապրած մատենագիտների գործերը: «Մեր հետախուզումներն, ասում է, մեզ բերին այն հզարակացութեան, որ առաջին քերականների, այն է՝ Գաւթի, Մովսէսի և Ստեփանոսի, իսկական երկերն առանձին առանձին մեր ձեռքը չեն հասած. և թէ այն, ինչ որ ձեռագրերում նրանց անունն է կրում, ուրիշ բան չէ, բայց եթէ Ստեփանոս Միւնեցու Աստուածաբանական մեկնութիւնը Մովսէսի քերականութեան շուրջը»: Հեղինակն իր որոնած երկերը գտել և համեմատական ճառագարհով երեան է հանել Գրիգոր Մագիստրոսի, Յովհան Երզնկացու և Նսայի Նշեցու քերականական ժողովածուների միջոցով: Ուրիշ խօսքով ուսումնասիրել է մի ամբողջ գոլրոցի դարաւոր գործունէութեան արգասիքները և խաւարից ու մոռացութիւնից լքյա աշխարհ հանել ինչ որ հիմքն ու էութիւնն է կազմում այդ գործունէութեան մի որոշ ճիւղի—քերականական արուեստի Ծնորհիւ ձեռագրերի մանրամասն նկարագրութեան, որ տալիս է մեզ հեղինակը, ազագայ ուսումնասիրողը շատ հեշտութեամբ պիտի որոնէ ու գտնէ հայ ձեռագրերում այն ամենը, ինչ որ մեում է դեռ առանց հետազոտութեան թէ սոյն գոլրոցի և թէ առհասարակ հայ լեզուի պատմութեան վերաբերմամբ: Չէ՞ որ ամբողջ միջին դարու հայերէնից շատ քիչ բան է յայտնի մեզ: Մ'ըպիտի մեծ գործ կատարուած պիտի լինէր դեռ, եթէ այս մեթոդով շարունակուէր գործը և կազմուէր ամբողջ փիլիսոփայական գոլրոցի և առհասարակ միջնադարեան հայերէնի բառարանն ու լեզուի թէ ձայնարանական, թէ ձևաբանական և թէ համաձայնական օրէնքների մանրամասն նկարագրութիւնը համեմատութեամբ արդէն ծանօթ դասական հայերէնի:

Ներածութեան մէջ ձեռագրերի դասաւորութիւնից յետոյ, որ շատ յաջող կատարուած է, երրորդ մասում—Возстановление утерянныхъ текстовъ,—պարզում է հեղինակը քերական և քերդող բառերի իմաստը նախնեաց մէջ, որով և համեմատաբար հեշտանում է կորած երկերի վերականգնումը՝ աջակցութեամբ պատմական վիպութեանց: Արդարև յոյժ նշանակալից է այն հանգամանքը, որ հնում քերականական արուեստն անբաժան մասն էր կազմում փիլիսոփայութեան և ճարտասանութեան և ամփոփում

իր մէջ նաև բանաստեղծութիւնն ու լիզուի պատմական ուսումնասիրութիւնը (ստուգարանութիւն և բարբառագիրտութիւն), մինչ այժմեան իմաստով ըմբռնուած քերականութիւնը կոչուած էր դպրութիւն: Այս վերջինիս իմաստը թէև վաղուց արդէն ծանօթ էր<sup>1)</sup> (տ. Հայկազեան բառարան, դպրութիւն), սակայն պ. Աղոնցի տուած ծանօթութիւնը, LXII, վերացնում է այլ ևս ամեն կասկած:

Այս ձևով իսկական քերականներին որոշելուց յետոյ հեղինակն ընդգծում է այն տարբերութիւնները, որ նկատուած է Դիոն. քերականութեան առաջին հայ մեկնութեան (Դաւթի) և յոյն բիւզանդական մեկնութեան միջև, վերջինս՝ ըստ Scholia in Diouysii Thracis artem Grammaticam, 1901 (Grammatici Graeci, հատ. Գ.), Համեմատութիւնները կատարուած են մեծ համբերութեամբ ու յաջող կերպով: Այն տարբերութիւնները սակայն, որ նկատուած են երկու կողմերի միջև, հաւանօրէն արդիւնք են ոչ միայն հայ մեկնողի հանդէս բերած շփոթութեան, ինչպէս էջ՝ CXXIII ի բողմակե (փխ. յլմբռ. նմանե), այլ թերևս նաև այն հանգամանքի որ մասամբ յաջորդ դարերում ընդօրինակողներն են ևղծել հայ բնագիրը, մասամբ էլ ու աւելի հաւանաբար, ձեռի տակ են ունեցել յունարէն այնպիսի օրինակներ, որոնք յիշեալ Բիւզանդական ժողովածուի մէջ պահուած չեն եղել:

Շարունակութեան մէջ պ. Աղոնցն իր կարգին քննադատօրէն մեկնում է Դաւթի գործը, դարձեալ կէտ առ կէտ համեմատութեամբ յոյն մեկնիչների հետ: Այս մասնջառուակապէս նշանակալից է նրանով, որ շատ արուեստագիտական բառեր, որոնք փիլիսոփաների դպրոցին են յատուկ և ժառանգութիւն են Դիոնիսիոյ, բացաղրուած չեն և ճշտուած ըստ ըմբռնման հայ քերականների: Աշխատութեանս հեղինակն ինչպէս ստրկական հետևողութիւններն է ընդգծել, այնպէս և պատահած ինքնուրոյն երևոյթներն է շեշտել: էջ CLXXXIՎ և շարունակութեան մէջ հեղինակն, հանդերձ օրինակներով, զետեղում է ցանկն այն նախդիրների, որոնց օժանդակութեամբ սոյն դպրոցում կազմել են բազմաթիւ, մեծ մասամբ գիտական, բառեր հետևողութեամբ յունականին: Անշուշտ աւելի մեծ պիտի լինէր այս էջի օգտակարութիւնը, եթէ առանց բացաղրութեան թողուած չլինէին այնպիսի օրինակներ

1) Ներուի մեզ դիակլ տալ այստեղ, որ պ. Աղոնցը առ հասարակ զանց է առնում յիշատակել, երբ մի որ եւ է հարցի վերաբերմամբ միևնոյն եզրակացութիւնը իրանից առօջ ուրիշներին արդէն յայտնի է եղել, օր. Բերդել բառի համեմատութիւնը, էջ՝ LXIII սրով. kerdem բառի նետ, հմ. Հայկ. բառ. Բերդել:

ինչպէս մատ—հրաման, զով—ա—մ ունի (սօր—πλεστιχός, ջոկ—суб?), բակ—Յաճակաւն, ևն: Հայ քերականները ծաղկման ժամանակի (է. դար) որոշումով վերջանում է պ. Ադոնցի հմտալից ներածութիւնը:

Քերականութեան մէջ, որ անմիջապէս յաջորդում է ներածութեան, աչքի են ընկնում կատարուած հայացումներն ու հելլենացումները: Այստեղ միանգամ ևս (հմ. Արարատ 1914, էջ 1129) կը կամենայի շեշտել, որ ոչ միայն փիլիսոփաների դպրոցում, այլ թիրևս աւելի վաղ էլ և ընդհանրապէս հայ լեզուի ուսուցիչները, յունականի հետեւողութեամբ, յասկապէս ով դերանուան մէջ և յունարէն օ-ի դիմաց ճանաչում էին երկար օ-ի անհրաժեշտութիւնը և նշանակում էին ով, առանց վ բաղաձայնը արտասանելու:

Քերականութեան բաժնում, հայ բանասիրութեան համար, անգնահատելի գանձեր են այն մի երկու վկայութիւնները, որոնք բնագրում բերուած են Հոմերոսից և թարգմանուած հայերէնի, օր. «և մակապրեալ իմ զոտին այժմ զքո գարշապար, ունայնս պանծաս»: Ուշագրաւ է այն պարագան, որ այս հազուագիւտ թարգմանութիւններն, հակառակ սպասուածին, կատարուած են աղատօրէն և ոչ ստրկարար:—Ոչ պակաս արժէքաւոր են այն հատուածները, որոնց դիմաց յոյն բնագիրը լուծւում է: Դժուար թէ այդ բոլորը հայ թարգմանիչն իրանից աւելացրած լինէր: Առանձին շահեկանութիւն է ներկայացնում բայի մասը, ուր պատահած նորութիւնները փիլիսոփայական հայերէնի ամենից բնորոշ կողմն են կազմում, օր. աճման կիրառութիւնը—կլովիէի (կովիել եմ), կլովեցի (կովիել էի), կլովիիի (կովիել կամ կովիուել եմ), ևն, կամ երկակիի գործածութիւնը, ինչպ. կովիոցի (ա. զէմք—մեկն երկուս կովեցիկն), կովիոցե, կովիոց: Այս առթիւ տեղն ենք համարում ցաւ յայտնել, որ տպագրական սխալներն ամբողջովին նշանակուած չլինելով՝ շատ անգամ ընթերցողը կարող է ընկնել մոլորութեան մէջ, ինչպէս էջ 56 կովիեմ բայի կրաւորական ստորադասական գերակատարի եզակի թուի վերաբերմամբ: Ինձ անհաւանական է թուում, որ մինչ ներգործականում համապատասխան ձևերն աճումնաւոր են—բե կլովեցի, ևն, էջ 54, կրաւորականում, բացառարար, առանց աճման լինին բե կլովեցեալ էի, էիք, եք, երբ, մանաւանդ, կրաւորականի մէջ էլ միևնոյն ժամանակի մնացած ձևերը—երկական և բազմական—զարձեալ աճումով են—բե կլովիոցեալ էի, բե կլովիեցեալք եմ, եւն:

Չեմ խօսում քերականական բաժնի պարունակած արուեստագիտական բառերի (աւերմին), ինչպէս և տաղաչափական բացադրութեանց մասին, որոնց նշանակութիւնը մեծ է ոչ միայն

գիտական այլ մինչև իսկ գործնական տեսակէտից էլ:— Դիոնիսիոսի քերականութեան հայացումից դարեր յետոյ նոյնիսկ փիլիսոփաների զպրոցում կարիք էր զգացում մեկնաբանելու այդ կարգի արուեստական բառերը, որոնց ցանկը, իրանց բացաղբութիւններով միասին գտնում ենք քերականութեան վերջում: Եւսայի Նչեցին իր կողմից անում է նաև մի այլ յաւելում— «ԱՐԾԱՐԾՄ ՈՒՆԲ ԽՈՆԱՐՀՄ ԱՆՑ ԲԱՅԻ» (յաղագս աղարից) աղարական ներգործական: Այստեղ խոնարհուած են երկու բայեր իբրև օրինակ— աղօթեմ և գովեմ. ուշագրաւն այն է, որ մէկ կողմից պատահում ենք նոր անուանումների, օր. միաւարական (= եզակի), բազմաւարական (= յոգնակի) յատկի, մեհական, ևն, միւս կողմից՝ աճման կատարեալ բացակայութեան, մի երևոյթ, որ, իմ կարծիքով, արժանի էր յիշատակութեան և լուսարանութեան:

Մի այլ բառացանկ, Iudex Graeco-Armeniacus, որ հեղինակի իրա կաղամածն է, քաղուած քերականութիւնից, միջոց է տալիս մեզ, առանց ամբողջ քերականութիւնը թերթեելու, տեսնելու, թէ յունարէն ինչ բառ հայերէն ինչ բառով է արտայայտում Դիոնիսիոսի թարգմանիչը. հէնց այս պատճառով էլ բառերի դասաւորութիւնն ըստ յոյն այբուբենի է: Այնուամենայնիւ դժուար չէ առաջին իսկ հայեացքից հանդիպել այնպիսի նշանակալից երևոյթի, ինչպիսին է— եղ մասնիկի համագորութիւնը յունարէն— *απο* մասնակին, օր. *αποστατος* = յամբեղ, էջ՝ 68.

Միևնոյն բանասիրական առաւելութիւններով օժտուած է և աշխատութեան յաջորդ մասերի— հայ մեկնիչների բնագրերի հրատարակութիւնը: Ինչպէս նախընթացներում, այնպէս և սրանց մէջ ձեռագրական տարբերութիւնները մի առ մի նշանակուած են ստորոտներում: Սրանց շահեկանութիւնը աւելանում է նրանով մանաւանդ, որ սրանց վերջում ևս կան թէ հասարակ թէ յատուկ բառերի կանոնաւոր և անթերի ցանկեր՝ բաժանուած մի քանի գլուխների՝ ըստ հեղինակների:

Վերջանում է գործը վրիպակների ցանկով, որը, ինչպէս ասացի, լրիւ չէ դժբախտաբար:

Մի հարց ևս խօսքս դեռ չկնքած: Յարգելի հեղինակը, հետևողութեամբ հներին, շատ յաճախ անուանում է Греко фильская ШКОЛА այն ինչ որ մենք սիրում ենք կոչել հայ փիլիսոփաների դպրոց: Երբ մարդ ի նկատի է առնում այն հսկայ մատենագրական գործունէութիւնը, որ ունեցել են այս դպրոցի ներկայացուցիչները հայ գրականութեան սկզբից մինչև զրեթէ վերջին դարերը, երբ հաշոււմ է, որ հայ աշխարհում նոյն ինքն սոսկ գիտական—իմաստասիրական մտածողութիւնն եղել է ժառանգութիւն այս դպրոցի հիմնադիրներից, չի կարող չհիանալ այն ջերմ իրական և մտածուած հայրենասիրութեան վրայ, որով անշուշտ վառուած ու աշխատած պիտի լինէին հայացնելու յօգուտ հայրենի ցեղի ամեն ինչ որ գտնում էին ընտիր և բարձր յոյն մտքի արտաղբութեանց մէջ: Ուրիշ բան, եթէ նեյլենասէր ասելով պիտի հասկանանք սիրահար կամ երկրպագու հելլեն քաղաքակրթութեան:

Մեքուպ վարդ. Մախուդեանց